- *Առաջին եռամսյակում արձանագրված 4 տոկոս աճից հետո նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապրիլին տնտեսական ակտիվությունը կտրուկ նվազեց 17 տոկոսով:*
- *Գնաճը փոքր-ինչ աճեց մայիսին, բայց դեռևս պահպանում է իր ցածր մակարդակը (1.2 տոկոս):*
- *Ապրիլին բյուջետային ծախսերն ավելացան 40 տոկոսով՝ արտացոլելով «ՔՈՎԻԴ-19»-ի առնչությամբ կառավարության աջակցության փաթեթները, մինչդեռ եկամուտները նվազեցին:*
- *Մայիսի կեսերից ՀՀ դրամը կայուն է:*
- *Ապրիլին վարկերի և ավանդների աճի տեմպը դարձավ չափավոր:*

2020թ. լավ մեկնարկից հետո «ՔՈՎԻԴ-19»-ի պատճառով տնտեսական ակտիվությունը կանգ առավ: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ (ՆՏՆԺՀ) 2020թ. 1-ին եռամսյակում ՀՆԱ-ն աճեց 3.8 տոկոսով: Աճի 80 տոկոսն ապահովեց սպառումը, որում մասնավոր և պետական սպառումն ավելացավ համապատասխանաբար 3 և 6 տոկոսով: 2020թ. 1-ին եռամսյակում ներդրումները կրճատվեցին ավելի քան 20 տոկոսով: Արտահանման համեմատ ներկրման ծավալների ավելի մեծ նվազման արդյունքում զուտ արտահանումը դրական ազդեց աճի վրա՝ (ՆՏՆԺՀ կրճատում համապատասխանաբար 0.7 և 4.4 տոկոսով): Ինչևէ, «ՔՈՎԻԴ-19»-ի տարածումը կասեցնելու նպատակով մարտի կեսերին ներդրված սահմանափակումների հետ մեկտեղ տնտեսական ակտիվությունը կտրուկ դանդաղեց: Տնտեսական ակտիվության ցուցանիշը մարտին ՆՏՆԺՀ նվազեց 4.5 տոկոսով, իսկ ապրիլին, այսինքն՝ սահմանափակումների ամբողջական ամսում՝ 17 տոկոսով (ՆՏՆԺՀ): Շինարարության ոլորտն ապրիլին արձանագրեց կրճատման ամենաբարձր ցուցանիշ, երբ արտադրանքի ծավալը կիսով չափ նվազեց: Սրան հաջորդեց մանրածախ առևտրի ծավալների 35 տոկոսով անկումը: Ծառայությունները (բացառությամբ մանրածախ առևտրի) կրճատվեցին 24 տոկոսով, մինչդեռ արդյունաբերական արտադրանքն ընկավ 8.5 տոկոսով: Ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշը մեծապես նվազեց, որի արդյունքում 2020թ. առաջին 4 ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակշրջանի համեմատ վերջինիս կուտակային մեծությունը 1.7 տոկոսով ընկավ: Հունվար-ապրիլ ամիսներին կուտակային տվյալներով կրճատում է արձանագրվել միայն շինարարությունում և առևտրում, ծառայությունների ոլորտը մնացել է անփոփոխ, իսկ արդյունաբերությունը գրանցել է 4 տոկոսի աճ շնորհիվ հանքարդյունաբերության 27 տոկոս աճի: Մայիսին սահմանափակումները հանելուց հետո շարժունակությունը վերականգնվեց: Միևնույն ժամանակ, կտրուկ ավելացան վարակման նոր դեպքերը: Ելակետային սցենարով կանխատեսվում է ՀՆԱ-ի կրճատում 2.8 տոկոսով: Ինչևէ, գնալով մեծանում է տևական համաճարակի հավանականությունը, որի դեպքում արտադրանքի ծավալները կարող են կրճատվել 6.5 տոկոսով:

Ապրիլին անշարժ գույքի շուկան կրեց իրավիճակի ծանր ազդեցությունը: Երևանում անշարժ գույքի գործարքների թիվը ՆՏՆԺՀ ընկավ 80 տոկոսով՝ նախորդ տարվա ապրիլին գրանցված 978-ի համեմատ կազմելով ընդամենը 187: Սրա հետ կապված՝ անշարժ գույքի հիփոթեկային վարկերի գումարը մարտ ամսվա համեմատ ապրիլին նվազեց 1 տոկոսով:

Մայիսին գնաճի մակարդակը փոքր-ինչ աճեց, սակայն պահպանեց ցածր մակարդակ՝ 1.2 տոկոս ՆՏՆԺՀ , որը նույնիսկ ցածր է ՀՀ ԿԲ-ի նպատակային ստորին միջակայքից. Սննդամթերքի գները ՆՏՆԺՀ աճեցին 1 տոկոսով: Հենց դրանով էր պայմանավորված գնաճի մակարդակի բարձրացումը, որն ապրիլին գրանցված 0.9 տոկոսի համեմատ մայիսին դարձավ 1.2 տոկոս: Միևնույն ժամանակ, փոխադրումների գներն արձանագրեցին 4 տոկոսով նվազում՝ արտացոլելով նավթի համաշխարհային գների կտրուկ անկումը, ինչպես նաև արտակարգ իրավիճակին նախորդող ժամանակաշրջանի համեմատ մայիսին շարժունակության մակարդակի նվազումը: Դրամավարկային քաղաքականությունը մնաց անփոփոխ: ՀՀ Կենտրոնական բանկի նորանշանակ նախագահ Մարտին Գալստյանը կստանձնի իր պաշտոնը 2020թ. հունիսի 13-ին:

Ե՛վ արտահանման, և՛ ներկրման ծավալների կրճատման տեմպերն ապրիլին աճեցին: Արտահանումը նվազեց, քանի որ արտահանման բոլոր խմբերը, բացի օգտակար հանածոներից, անկում արձանագրեցին: Արտահանման ծավալների կրճատումը կիսով չափ պայմանավորված էր ոսկերչական իրերի, թանկարժեք քարերի և մետաղների արտահանման փաստացի դադարով: Օգտակար հանածոների արտահանման ծավալներն արժեքային արտահայտությամբ

ՆՏՆԺՀ 23 տոկոսով բարձր էին, հիմնականում պղնձին արտահանման ծավալների 30 տոկոս աճի շնորհիվ: Նմանապես, ՆՏՆԺՀ ներկրման ծավալները նվազեցին 30 տոկոսով՝ արտացոլելով բոլոր ապրանքատեսակների խմբերի ներկրման ծավալների նվազումը, բացառությամբ սննդամթերքի, որտեղ ՆՏՆԺՀ արձանագրվեց 24 տոկոսով աճ: Կուտակային արտահայտությամբ 2020թ. առաջին 4 ամիսներին արտահանումը և ներկրումը կրճատվեցին համապատասխանաբար 8 և 11 տոկոսով, որի արդյունքում առևտրային դեֆիցիտը կրճատվեց մոտ 15 տոկոսով: Ինչևէ, սրա վրա չեզոքացնող ազդեցություն ունեցան 2020թ. 1-ին եռամսյակում Ռուսաստանից փոխանցվող զուտ տրանսֆերտների 65 տոկոսով նվազումը և զբոսաշրջիկների ներհոսքի դադարը:

Վերջին ժամանակներս փոխարժեքը համեմատաբար կայուն է: Մայիսի առաջին կեսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 2 տոկոսով արժեզրկումից հետո նույն ամսվա երկրորդ կեսին ՀՀ դրամը վերականգնվեց և մինչ օրս կայուն է: Պահուստներն աճեցին՝ կազմելով 2.7 միլիարդ ԱՄՆ դոլար: Այս աճը պայմանավորված էր մայիսին կատարված երկրորդ ուսումնասիրությունից հետո ԱՄՀ-ի պահուստային վարկի (SBA) միջոցների տրամադրմամբ:

Ապրիլին գրանցվեց բյուջեի 20 միլիարդ ՀՀ դրամի դեֆիցիտ, որի արդյունքում առաջին 4 ամիսներին հավելուրդի կուտակային մեծությունը նվազեց՝ կազմելով 18 միլիարդ ՀՀ դրամ: Ապրիլին հարկային եկամուտները ՆՏՆԺՀ նվազեցին 10 տոկոսով, իսկ ծախսերն աճեցին շուրջ 40 տոկոսով՝ պայմանավորված սոցիալական նպաստների, այլ տրանսֆերտների և կապիտալ ծախսերի աճով: Նշված աճի հիմքում ընկած են նաև «ՔՈՎԻԴ-19»-ին արձագանքմանն ուղղված աջակցության փաթեթները, որոնց տեղաբաշխումը սկսվել է ապրիլին: 2019թ. վերջի համեմատ 2020թ. մայիսի վերջին կառավարության պարտքը 100 միլիոն ԱՄՆ դոլարով աճեց: ԱՄՀ-ի «SBA»-ի երկրորդ ուսումնասիրության արդյունքում տրամադրվեց շուրջ 280 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում՝ ուղղված բյուջեի աջակցմանը, որը հասանելի կլինի, երբ վարկը կվավերացվի ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Ե՛վ վարկերի, և՛ ավանդների աճը դանդաղեց ապրիլին: Տնտեսության վարկավորումը ապրիլին ՆՏՆԺՀ 16 տոկոսով բարձր էր. այս ցուցանիշը ցածր է մարտի համեմատ, երբ այն կազմում էր 19.4 տոկոս: Սա գլխավորապես պայմանավորված էր ՀՀ դրամի արժևորմամբ: Առանց հաշվի առնելու փոխարժեքի ազդեցությունը՝ վարկերի աճի տեմպը մարտ ամսվա 17 տոկոսի համեմատ ապրիլին դանդաղեց՝ կազմելով 16 տոկոս: Այս նվազումն առավել ակնառու է ավանդների դեպքում, որտեղ ապրիլին աճի մակարդակն ընկավ մինչև 12 տոկոս: Ապրիլին ֆինանսական կայունության ցուցանիշները պահպանեցին իրենց համարժեքությունը: Ինչևէ, հնարավոր է, որ առանձին բանկերն ունենան տարբեր կատարողական ցուցանիշների, իսկ տնտեսական ակտիվության թուլացման ազդեցությունն իրեն զգացնել տա հետագայում:

Գծապատկեր 1. Ապրիլին տնտեսությունը կտրուկ կրճատվեց

(փոփոխություն ՆՏՆԺՀ, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Մայիսին գները փոքր-ինչ աճեցին

(տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Առևտրային դեֆիցիտը նվազեց, քանի որ արտահանման համեմատ ներկրումն արձանագրեց ծավալների ավելի մեծ կրճատում

(մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 4. Ապրիլի վերջի դրությամբ բյուջեն դեռևս արձանագրեց հավելուրդ

(մլն ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝ՀՀ ՖՆ

Գծապատկեր 5. Վարկերի աճի տեմպը դանդաղեց

(մլն ՀՀ դրամ)



Գծապատկեր 6. Դրամը վերջերս կայուն է

(ցուցիչ, 2-ը մարտի, 2020թ.=100)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ